

Հ.Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԵՐԿԻՐ ԵՎ ԱՇԽԱՐՀ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ, ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Դիտարկվում են **երկիր** և **աշխարհ** բաղադրիչներ պարունակող դարձվածային միավորները հայերենում, ռուսերենում և անգլերենում: Ներկայացված են դրանց իմաստային, քերականական ընդհանրություններն ու տարբերությունները՝ ելնելով լեզուների կառուցվածքային առանձնահատկություններից և լեզվակիր ժողովուրդների ազգային մտածողությունից:

Առանցքային բառեր. դարձվածային միավոր, բաղադրիչ, դարձվածային համարժեքներ, իմաստային համընկնումներ, լեզվամտածողության տարբերություններ:

Ներածություն: Դարձվածքներին բնորոշ ազգային բնույթը պայմանավորված է միևնույն երևույթի ընկալման և մեկնաբանման տարբերություններով՝ արտացոլելով տվյալ ժողովրդի կյանքն ու մշակույթը, պատմությունը, հոգեբանությունը, կենցաղային պայմանները, ազգային ինքնատիպությունը, հասարակական և բարոյական արժեքների համակարգը, հավատալիքները, ավանդույթներն ու սովորույթները: Դարձվածքների առաջացման աղբյուրները տարբեր են՝ բանահյուսություն, ազգային ավանդույթներ, հավատալիքներ, սովորություններ, փոխառությունները, թարգմանություններ, պատճենումներ: Դարձվածքների բաղադրիչ անդամ կարող են լինել գոյները, կենդանիների անվանումները, մարմնի մասերը, ինչպես նաև բնության առարկա անվանող բառերը, որոնք կարող են նկարագրել որևէ իրավիճակ, երևույթ կամ հատկանիշ: Հարուստ բառապաշար և բառերի բազմիմաստություն ունեցող լեզուները կարող են դրսևորել դարձվածակազմիչ լայն հնարավորություններ: Դիտարկվում են շրջակա բնության մաս կազմող հասկացությունների շարքին պատկանող **երկիր** և **աշխարհ** բառերը, որոնք լեզուներում կարող են լինել դարձվածքի հիմնական կամ ծավալիչ բաղադրիչներ: Բազմաթիվ դարձվածքներ են կազմվել և խոսքի մեջ ներդրվել այս բաղադրիչներով, որոնք հանդես են գալիս և՛ նման, և՛ միմյանցից խիստ տարբեր իմաստներով:

Երկիրը բացատրվում է որպես՝ 1. Արևի երրորդ մոլորակը, որտեղ բնակվում է մարդկությունը, երկրագունդ, աշխարհ, 2. որևէ պետության պատկանող տարածություն, 3. հող, ցամաք, 4. հայրենիք, 5. վայր, տեղ: Հայերենում հանդիպում են **երկիր** բառով [1] կազմված հետևյալ դարձվածքները [2], որոնք խորհրդանշում են

✓ կյանք ու նրա հետ կապված, նրան առնչվող երևույթներ, հարաբերություններ, հատկանիշներ՝

Ավերյաց երկիր – բաղձալի, ցանկալի երկիր, առատության՝ երջանկության վայր՝ տեղ: *The Promised Land. Սուրբ երկիր* (կրոն.) – Պաղեստին: *The Holy Land.*

Երկիր տեսած (մարդ) – կյանքի փորձ ունեցող, հարուստ կենսափորձով

Երկրի երեսին – աշխարհում, կյանքում: **Երկրի երեսից անհեղանալ** – իսպառ՝ անհետ կորչել: **Երկրի երեսից ջնջել/սրբել/վերացնել** – իսպառ ոչնչացնել, կործանել:

Երկրի վրա հանել – ստեղծել, մեջտեղ բերել:

Երկրին կպած/մեխված – վերացած՝ ռոմանտիկ ապրումներից զուրկ, հասարակ մարդու կյանք վարող: **Երկրին գամել** – վերացած՝ ռոմանտիկ՝ երագային վիճակից ցած բերել:

Երկրի չափ – շատ մեծ:

Երկրով մեկ – ամբողջ երկրով:

Ամեն երկիր իր օրենքներն ունի – յուրաքանչյուր տարածքին հատուկ են որոշակի կանոններ, *so many countries, so many customs, every land has its own law.*

Ռուսերենում **земля** բաղադրիչով հանդիպող դարձվածքները [3] սակավաթիվ են, բայց արտահայտած իմաստներով գրեթե համարժեք են հայերենում գոյություն ունեցող դարձվածային միավորներին:

Обетованная земля – ավետյաց երկիր:

На земле (на свете) – աշխարհում:

Стереть с лица земли – երկրի երեսից ջնջել, անհետացնել:

За тридевять земель – (բնստ.) յոթ սարի հետև, շատ հեռու:

Անգլերենում **earth** բաղադրիչով դարձվածային միավորները [4] ավելի հատկանշական են տվյալ լեզուն կրող ժողովրդի մտածելակերպին: Դրանց դարձվածային համարժեքները սակավաթիվ են, բաղադրիչային շատ համարժեքներ չեն հանդիպում դիտարկվող մյուս լեզուներում, իմաստային համարժեքները հանդիպում են այլ բաղադրիչներով, հանդիպում են նաև թարգմանություններ, պատճենումներ, սակայն դժվար է եզրակացնել, թե որ լեզուն է եղել սկզբնաղբյուրը:

Go to earth – թաքնվել: **Run to earth** – 1. smb հետևել, բացահայտել, 2. smth գտնել:

To cost the earth – շատ փող արժենալ, թանկ լինել, *կրակի գին: To burn the earth* (ամեր.) – արագ վարել մեքենան, ամբողջ ուժով սլանալ:

Bring smb back (down) to earth – երկիր իջեցնել, վերադարձնել իրական կյանք, մեկին *երկնքից երկիր իջեցնել, спустить на землю. Come (get, be) back*

(down) to earth - երկնքից երկիր իջնել, վերադառնալ իրականություն, *надать с неба на землю*.

At the end of the earth - աշխարհի ծայրին:

The salt of the earth - մարդիկ, որոնք երկիրը ավելի լավ են դարձնում, երկրի աղը, *Соль земли* - հասարակության առաջատար մասը:

Heaven on earth - երկրային դրախտ, ապրելու հիասքանչ տեղ, *рай земной*.

On the face of the earth - աշխարհի երեսին:

Wait and see how the earth/land lies (how the wind blows) - կարծիք հայտնելուց առաջ սպասիր, տես թե ուրիշներն ինչ դիրք կրոնեն:

Աշխարհ բառը՝ որպես *երկիր* բառի հոմանիշ, ունի դարձվածակազմիչ լայն հնարավորություն և դարձվածային միավորներում հանդես է գալիս ամենատարբեր իմաստներով, որոնց մի մասը համարժեքներ ունի դիտարկվող լեզուներից մեկում, մյուսները հատուկ են միայն հայերենին:

Աշխարհը բացատրվում է հետևյալ կերպ՝ 1. երկրագունդ, 2. երկիր, 3. աշխարհամաս, 4. իրականություն, կյանք, 5. շրջապատ, միջավայր: Հայերենում *աշխարհ* բաղադրիչով դարձվածքները [5] կարող են խորհրդանշել՝

✓ Մահ, կյանքի ավարտ՝

Այն աշխարհը գլորել/գնալ/ճամփել/չքվել/ուղարկել - սպանել, գերեզման ուղարկել:

Անցավոր աշխարհ(ք) - վաղանցուկ, անցնող գնացող կյանք, *perishable world*. **Աշխարհը թողնել** - 1. աշխարհից հրաժարվել, կրոնավոր դառնալ, 2. Մեռնել, վախճանվել:

Աշխարհի հետ հաշիվները փակել/մաքրել - հոգին ավանդել, մեռնել, մահվան սպասել:

Աչքը աշխարհի վրա փակել - մեռնել, հոգին ավանդել:

✓ Կյանքին անտեղյակ՝

Այն աշխարհից եկած - այս երկրի առօրյա կյանքին՝ գործերին անտեղյակ, անգիտակ, *from the other world*.

Այս աշխարհից չլինել - այս երկրի կյանքին՝ օրենքներին տեղյակ չլինել, կյանքին բոլորովին չհարմարվել:

Աշխարհից խաբար չլինել (չունենալ) բրբ. - կույս, անարատ լինել, միամիտ, անփորձ լինել:

Աշխարհից կտրվել - 1. աշխարհը չզգալ, չտեսնել, 2. հասարակությունից, մարդկանց լայն շրջանից կապերը, հարաբերությունները խզել, կտրել, հեռանալ:

✓ Իրական, երևելի՝

Այս/էս աշխարհ - իրական, երկրային կյանք՝ ի հակադրություն հանդերձյալ կյանքի:

Աշխարհի աչք - երևելի, պաշտելի, բոլորի կողմից սիրված: **Աշխարհի աչքը հանել** – լավ ապրելով, կյանք վայելելով նախանձ շարժել՝ զարմացնել:

✓ Վիշտ, իրարանցում, դժբախտություն՝

Աչքին(աչքում) աշխարհը մթնել/սևանալ -1. աչքերի առջև մթնել, բան չտեսնել, 2. խոր վշտից ոչինչ չտեսնել, ոչնչի նշանակություն չտալ, 3. Հարվածից տեսողությունը մթագնել:

Աշխարհը աչքին սև սիսեռ երևալ – ուղեղը մթագնել (հրապուրանքից):

Աշխարհը աշխարհով անցնել/դիպչել – մեծ իրարանցում առաջանալ, մեծ պատերազմ ծագել:

Աշխարհ(ք)ը գլխին մթնել/շուռ գալ/փլվել/քանդվել – մեծ դժբախտության հանդիպել, ծանր հարվածի ենթարկվել:

Աշխարհի դարդը մեկին տալ (խսկց.) - անտեղի տարվել մեծ վշտով, հոգսերով - *have all the sorrow of the world.*

✓ Արժեք, գրագիտություն՝

Աշխարհ արժենալ – չափազանց մեծ արժեք ունենալ:

Աշխարհի այբը մեկի փորում լինել – շատ գրագետ, բանիմաց լինել:

Աշխարհի բանը իմանալ - աշխարհի գաղտնիքն իմանալ, ապագան կռահել, իրերի ընթացքը գուշակել: **Աշխարհի չարն ու բարին ճանաչել** – աշխարհը հասկանալ՝ ընկալել, կյանքի լավն ու վատը հասկանալ: **Աշխարհի խեղ-չառից հասկանալ** (խսկց.) – կյանքի գաղտնիքներն իմանալ, կյանքը հասկանալ, *know(see) the world.*

✓ Թշվառություն, անհանգստություն՝

Աշխարհից բան չիմանալ - զուրկ ու թշվառ ապրել:

Աշխարհը իրար գալ (իրար գլխով դիպչել) – իրար անցնել, խիստ անհանգստանալ: **Աշխարհի հերն անիծած** – սեփական անձի մասին պետք է մտածել, հոգ տանել և ոչ թե աշխարհի հոգսերով տառապել:

✓ կյանք, ամուսնություն՝

Աշխարհ գալ/դուրս գալ – 1. ծնվել, 2. առաջանալ, երևան գալ, *come into the world.* **Աշխարհը բռնել գնալ** – 1. մշտնջենապես ապրել, շատ երկար ապրել, 2. կյանքի պայմաններին հարմարվել, *աշխարհի հեպ գնալ:*

Աշխարհ մտնել – 1. ամուսնանալ, 2. կյանք մտնել:

Աշխարհի հեպ գնալ – կյանքին հարմարվել:

✓ ուրախություն՝

Աշխարհը իրենը լինել/դառնալ – մեծ բախտի հանդիպել, անչափ ուրախանալ:

Աշխարհով մեկ դառնալ/լինել – շատ ուրախանալ:

Աշխարհը իրեն փայլ - անչափ ուրախանալ, իրեն երջանիկ զգալ:

Աշխարհը մոռանալ - հափշտակվել, կախարդվել, հմայվել, ուշադրությունը խիստ լարել՝ ոչինչ չզգալ և չտեսնել:

✓ կյանքից կտրված՝

Աշխարհից հեռու/ աշխարհի ծայրին - 1. մարդկանցից՝ աղմուկից՝ բնակավայրերից հեռու, 2. կյանքի իրադարձություններից հեռու, կյանքից կտրված:

Աշխարհից հրաժարվել - աշխարհիկ կյանքից հրաժարվել:

Աշխարհից կուշտ - 1. ամեն ինչով լիացած, որևէ բանի անկարող 2. Անտարբեր, ձանձրացած:

✓ հոչակ, տարածում՝

Աշխարհ առնել՝ բռնել - ամեն տեղ տարածվել: **Աշխարհով մեկ անել** - ամեն տեղ տարածել, հոչակել: **Աշխարհը դողդացնել** - 1. մեծ աղմուկ բարձրացնել, 2. մեծ անուն հանել, հոչակվել աշխարհով մեկ:

Անունն աշխարհով մեկ անել/լինել - 1. հոչակել, համբավը տարածել, 2. խայտառակ(վ)ել, անվանարկ(վ)ել: **Անունն աշխարհի բերանն անցնել** - աշխարհով մեկ խայտառակել, խոսք ու զրույցի առարկա դառնալ: **Ձայնը աշխարհը(աշխարհով մեկ) զգել** - գոռալ-կանչել (ի լուր շրջապատի):

Աշխարհի մեջ ծաղր ու ծանակ դառնալ - աշխարհում՝ բոլորի մոտ խայտառակվել:

✓ նախատինք, խոռովություն՝

Աշխարհը շուռ չի գա - մեծ բան տեղի չի ունենա, մեծ վնաս չի լինի: **Աշխարհը շուռ գա** - ինչ (մեծ, վատ բան) էլ պատահի: **Աշխարհ(ք) չի քանդվի** (հեգն.) - փոքր բանից մեծ վնաս չի լինի:

Աշխարհի լափը մեկի գլխին թափել - մեկին սաստիկ նախատել, անպատվել, հոմանիշ դարձվածք է՝ **շան լափը գլխին թափել**:

Աշխարհ(ք)ը սև կկապի - հեգնական արտահայտություն մեկի խոռվության՝ վրդովմունքի, մի բանից հրաժարվելու վերաբերյալ:

✓ բանիմաց, շրջագայած

Աշխարհ փեսնել - շատ շրջել, կյանքում փորձվել, բանիմաց դառնալ:

Աշխարհ փեսած/ ման եկած - փորձված, բանիմաց, կյանքի մեծ փորձ ունեցող, *worldwise*.

Աշխարհ(ք)ը ուր(ք)ի փակ առնել - աշխարհով մեկ շրջագայել, պտտել, թափառել:

Աշխարհեաշխարհ (երկրեերկիր)/աշխարհից աշխարհ ընկնել - թափառել՝ մի նպատակ հետապնդելով:

Հայերենում հանդիպում են դարձվածքներ, որոնք ձևավորվել են որպես թևավոր խոսքեր, փոխաբերական իմաստով նախադասություններ և ասացվածքներ:

Աշխարհի չափ - անչափ, անսահման:

Աշխարհը չի ծնել /չի տեսել – նմանը չունեցող:

Իրեն աշխարհի կենտրոն կարծել – իրեն մեծ, ամենակարող մեկը համարել:

Աշխարհն (աշխարհիս բանն) այսպես եկել է, այսպես էլ կգնա - կյանքի օրենքներն անփոփոխ են, միշտ էլ այդպիսիք են եղել ու կմնան:

Նորից աշխարհ չեմ գալու – մի անգամ եմ ապրում (ուրեմն այսինչ բանն անեմ):

Աշխարհը դմակ՝ մարդը դանակ - ամեն մարդ ձգտում է աշխարհի վայելքներից, բարիքներից ստանալ որքան կարողանում է, ուժը պատում է (առանց ուրիշի մասին մտածելու):

Ռուսերենում հանդիպող **мир** բաղադրիչով դարձվածքները [6] ոչ միայն ներկայացնում են արտաքին դիտարկումների արդյունքները, այլև վերացարկումների միջոցով մեկնաբանում են դրանց բարոյական նշանակությունը:

Всем миром (հնգ.) – բոլորը միասին, կոլեկտիվ կերպով:

Идти по миру - թափառել՝ ողորմություն խնդրել:

Пускать (пустить) по миру – սնանկացնել, աղքատացնել, նյութական միջոցներից զրկել:

Перевернуть весь мир - անհնար մի բան անել, **աշխարհը շուռ տալ**:

Не от мира сего – իրական կյանքից կտրված, կյանքին չհարմարված, ցնորքներով տարված մարդ, **այս աշխարհից չլինել, աշխարհից կտրված**:

На миру (на людях) и смерть красна /с миром и беда не убыток – երբ մենակ չես, նույնիսկ մեռնելուց չես վախենում, ընկերովի մահը հարսանիք է:

С миру по нитке – բոլորից քիչ-քիչ հավաքելով նշանակալի բան է ստացվում, **Աշխարհն աշխարհով լինել** –իրար օգնելով ապրել:

Каких мир (свет) не производил – այդպիսին դեռևս չի եղել, **աշխարհը չի ծնել(չի տեսել)**, աշխարհում գոյություն չունի:

Мир тесен – ցանկացած տեղում հնարավոր է ծանոթ մարդու հանդիպել, *the world is a small place.*

Мировая скорбь – ծայրահեղ վատատեսություն, հիասթափություն:

Ни за какие блага в мире /ни за что на свете – ոչ մի դեպքում, **աշխարհն էլ շուռ գա**:

Мир дунет ветер будет, мир плюнет море будет – մարդիկ միասին ամեն ինչ կարող են:

Отойти от мира (сего) /уходить в лучший мир /отправляться на тот свет – մեռնել, այն աշխարհը գնալ, այս աշխարհը թողնել, աշխարհից գնալ:

По всему миру /по белу свету (ходить, бродить, скитаться) – ամենուր, աշխարհեաշխարհ (գնալ, թափառել):

Сильные (великие) мира сего. - այս աշխարհի ուժեղները, հզորները (հասարակության մեջ բարձր դիրք գրավող մարդիկ): **Малые мира сего** - փոքր մարդիկ, հասարակ մահկանացու (ոչ բարձր հասարակական դիրք գրավող մարդիկ):

До скончания мира(века) - անսահման երկար ժամանակ, մինչև աշխարհի վերջը:

Անգլերենում հանդիպող **world** բաղադրիչով դարձվածային միավորներին [7] համարժեք դարձվածքներ հանդիպում են ոչ միայն հայերենում, այլև ռուսերենում, սակայն դարձվածքների մեծ մասը հատուկ է միայն անգլերենին:

All the world knows - ամբողջ աշխարհը գիտի, *всему миру известно*.

Be in a world by oneself (be in a world of one's own) – 1.պարփակվել իր մեջ, 2.խորասուզվել մտքերի մեջ, *աշխարհից կտրվել*:

Begin the world – նոր կյանք սկսել: **Bring into the world** - աշխարհ բերել, ծնել, *произвести на свет*. **Come into the world** - ծնվել, *աշխարհ գալ*:

Come/get/go/rise up in the world – հաջողության հասնել: **Come/ go down in the world** - կորցնել ունեցած դիրքը, հաջողությունը:

A dream world - երազանքների աշխարհ, *Ավերյաց երկիր, мир зрез* .

A better world (another, the next, the other world) - այն /մյուս աշխարհ, *потусторонний мир, лучший мир*.

Dead in the world – 1. անգգա, անգիտակից, 2. խոր քնած, 3. խիստ հոգնած, 4. հարբած – *blind to the world* - *աշխարհից կտրված*:

Have the world at one's feet – մեծ հաջողություն ունենալ, համընդհանուր ճանաչում գտնել, *անունն աշխարհով մեկ անել*:

Not for (all) the world – ոչ մի դեպքում – *ни за что на свете*.

One would give the world to know - ամեն ինչ կտայի, որ իմանայի:

So goes/wags the world - աշխարհի օրենքն է, *the way of the world, такова жизнь, таков мир*.

Set the world to rights – լուծել աշխարհի խնդիրները:

Think/consider the world owes one a living – մտածել, թե աշխարհն ինչ-որ մեկին պարտք է (պետք է ամեն ինչ անի նրա համար):

Take the world as it is – հարմարվել՝ չփորձելով փոփոխել գոյություն ունեցող պայմանները:

All the world and his wife (խսկց.) - բոլորը առանց բացառության:

All's right with the world - ամեն ինչ կարգին է:

Half the world knows not how the other half lives – մի սոցիալական խումբը անտեղյակ է մյուսի խնդիրներին:

The weight of the world on one's shoulders – ծանր բեռ մեկի ուսերին, դժվար իրավիճակ -*աշխարհի բեռը մեկի ուսերին*:

To do someone a world of good /harm – շատ լավ/վատ լինել ինչ-որ մեկի համար:

World without end - անվերջ, մշտապես:

With the best will in the world – նույնիսկ ամենամեծ ցանկության դեպքում:

Հայերենում, ռուսերենում, անգլերենում հանդիպող **երկիր, աշխարհ** բաղադրիչներով դարձվածային միավորները ձևավորված են բազմազան կառուցվածքային կաղապարներով՝ պահպանելով դիտարկվող լեզվի քերականական առանձնահատկությունները: Հանդիպում են մեծաքանակ բառային և բայական տարբերակներ, իմաստային համընկնումներ, համարժեքներ, պատճենումներ, իսկ նախադասություն դարձվածքները հիմնականում հատուկ են մեկ լեզվի և վկայում են ազգային յուրահատուկ մտածողության մասին:

Եզրակացություն: Դիտարկվող լեզուներում հանդիպող **երկիր և աշխարհ** բաղադրիչներ պարունակող դարձվածային միավորներն օժտված են իմաստային բազմազանությամբ, դարձվածակազմիչ մեծ հնարավորությամբ և կիրառության բարձր հաճախականությամբ: Հայերենում, ռուսերենում և անգլերենում հանդիպող **երկիր և աշխարհ** բաղադրիչներով դարձվածքների զուգադրական դիտարկումը ցույց է տալիս, որ առկա են որոշակի իմաստային ընդհանրություններ, իսկ քերականական տարբերությունները պայմանավորված են տվյալ լեզվի կառուցվածքային առանձնահատկությամբ, նախադասություն - դարձվածքների կիրառությունները՝ լեզուն կրող ժողովուրդների ազգային մտածողության յուրահատկություններով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Աղայան Է.** Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան» հրատ., 1976, I-II մ., -929,1615 էջ:
2. **Սուքիասյան Ա.Մ., Գալստյան Ս.Ա.** Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան.- Երևան, ԵՊՀ, 1975.-614էջ:
3. **Молотков А.И.** Фразеологический словарь русского языка.- Москва, “Советская Энциклопедия”, 1967.-543с.

4. **Kunin A.**, Comprehensive English-Russian phraseological dictionary, Moscow, Russky Yazik Media, 2006, -1210p.
5. **Բեդիրյան Պ.**, Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, ԵՊՀ հրատ., Երևան, 2011 -1404էջ:
6. **Մելքումյան Ռ, Պողոսյան Պ.**, Ռուս-հայերեն դարձվածաբանական բառարան, Երևանի համալս.հրատ., Երևան 1975-615 էջ:
7. **Cowie A.P., Mackin R., McCaig I.R.**, Oxford Dictionary of English idioms (Oxford dictionary of current idiomatic English), Oxford University Press, 1983 .-685p.

А.Г. ПЕТРОСЯН

ФРАЗЕОЛОГИЧЕСКИЕ ЕДИНИЦЫ С КОМПОНЕНТАМИ ЗЕМЛЯ И МИР В АРМЯНСКОМ, РУССКОМ И АНГЛИЙСКОМ ЯЗЫКАХ

Рассматриваются фразеологические единицы, включающие компоненты *земля* и *мир* в армянском, русском и английском языках. Представлены семантические, грамматические сходства и различия, которые зависят от структурных особенностей данных языков и языкового мышления разных народов.

Ключевые слова: фразеологическая единица, компонент, фразеологические эквиваленты, семантические совпадения, различия языкового мышления.

H.G. PETROSYAN

PHRASEOLOGICAL UNITS WITH THE COMPONENTS EARTH AND WORLD IN ARMENIAN, RUSSIAN AND ENGLISH

Phraseological units with the components *earth* and *world* in Armenian, Russian and English have been considered. Semantic, grammatical similarities and differences have been introduced which depend on the structural peculiarities of the mentioned languages and linguistic thinking of different nations.

Keywords: phraseological unit, component, phraseological equivalents, semantic coincidences, differences in linguistic thinking.